

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՀՈՐԲԱՏԵՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

<<19>> սեպտեմբերի 2014թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի մարտի 10-ի N 11 որոշումը՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանի, սոցիալական ապահովության և առողջապահության վարչության առաջատար մասնագետ Յողիկ Բաբայանի, ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Վարդգես Իսախանյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վանիկ Խուդավերդյանի, կրթության, հողաշինության և հողօգտագործման բաժնի՝ մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Սմբատ Խլիսայանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ Բագրատ Մարգարյանի, ֆինանսական վարչության պետ Ռազմիկ Հայրապետյանի, ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ Սահակ Ոսկանյանի և իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Աիդա Մանասերյանի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Հորբատեղի գյուղական համայնքում իրականացվեց վարչական հսկողություն ուստիկանության, սոցիալական պաշտպանության, պաշտպանության, կրթության, հողօգտագործման, ընդերքօգտագործման, անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության, առևտրի և ծառայությունների, արտակարգ իրավիճակների, տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ իրականացվող վարչական հսկողության բնագավառներում:


1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արածանագրությունը՝ համաձայն հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ կից հավելվածների:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:


3. Նշումներ / վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի առարկությունների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/.

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Հորբատեղի գյուղական համայնքի ղեկավարին:


Նորայր Սիմոնյան (աշխատանքային խմբի ղեկավար)


/ստորագրություն/


Յողիկ Բաբայան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Վարդգես Իսախանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Վանիկ Խուդավերդյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Սմբատ Խլիսաթյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Բագրատ Մարգարյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Ռազմիկ Հայրապետյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/


Սահակ Ոսկանյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Աիդա Մանասերյան (աշխատանքային խմբի անդամ)


/ստորագրություն/

Գագիկ Սանդրոսյան (Հորբատեղի գյուղական համայնքի ղեկավար)


/ստորագրություն/

2014 թվականի երկրորդ եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզի Հորբատեղի գյուղական համայնքում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկանք

Հորբատեղի գյուղական համայնք

Հավելված 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է չիլի	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>			<p>V պլանը չի մշակվել հայտեր չեն ներկայացվել</p>	<p>Պլանը չի մշակվել, <u>2</u>են պահպանվել ՀՀ կառավարության 10.06.2011թ. N 919-Ն որոշման պահանջները, ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի <<Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին>> N919-Ն որոշում, կետ 7</p>	<p>Առաջարկվել է մշակել պլանը սահմանված կարգով, առաջարկվել է ներկայացնել անհրաժեշտ հայտեր</p>	<p>մինչև 30.12.14թ</p>

<p>2. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն</p>		<p>V /Համայնքի ղեկավարի կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտ է ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն/</p>		<p>Սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ առկա չէ, չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները</p>	<p>Ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տեխնիկական առաջադրանք սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի մշակման նպատակով</p>	<p>*</p>
<p>3. Համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում</p>		<p>V Համայնքի զարգացման ծրագրում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ ներառված չեն</p>		<p>Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշման պահանջները</p>	<p>Առաջարկվել է համայնքի ապագա զարգացման ծրագրերում նախատեսել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ</p>	

Հավելված 2. Սոցիալական պաշտպանության բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ 6-րդ հոդվածի 2-րդ մաս. բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանությամբ</p>			<p>V ՀՀ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չէ, չեն պահպանվել Առանց ծնողական խնամքի մնացած</p>	<p>Առաջարկվել է այսուհետ խստագույնս պահպանել դրույթի պահանջները</p>	<p>1 ամիս</p>

<p>ն հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կամ նրանց օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն պահանջելու պարբերաբար ուսումնասիրել խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին՝ երեխաներին տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը: Տվյալ ուսումնասիրությունները կազմակերպում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կամ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումների հիման վրա, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Նշված կազմակերպություններում պաշտոնատար անձինք պարտավոր են վերացնել բացահայտված խախտումները և տեղեկացնել այդ մասին լիազորված պետական կառավարման մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:</p> <p>11-րդ հոդվածի 1-ին մաս Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները հատուկ հոգածության և պաշտպանության իրավունք ունեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որոնք պետք է նպաստեն երեխաների լիարժեք կենսագործունեությանը և զարգացմանը, ինչպես նաև ապահովեն նրանց մասնակցությունը հասարակական կյանքին:</p>		<p>երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը ձեռնարկում է միջոցներ օրենքով սահմանված կարգով>></p>	<p>երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 11-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները . այն է <<Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինը ձեռնարկում է միջոցներ օրենքով սահմանված կարգով>>՝ համաձայն որի անհրաժեշտ է իրազեկել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ծնողներին սոցիալական երաշխիքներից օգտվելու հնարավորությունների մասին</p>		
<p>2. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ օրենք) 18-րդ հոդվածի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշմանդամի աշխատանքային զբաղվածության երաշխիքներն ապահովվում են՝</p> <p>1) հաշմանդամների աշխատուժն օգտագործող կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև հաշմանդամների հասարակական կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ ֆինանսատնտեսական քաղաքականության իրականացմամբ.</p>	<p>Վ ՀՀ Հայաստանի Հանրապետության պետական և իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության</p>		<p>Թեքահարթակ չկա՝ համայնքապետարանում և մշակույթի տանը, չեն պահպանվել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջները</p>	<p>Առաջարկվել է թեքահարթակ կառուցել</p>	<p>1 ամիս</p>

<p>2) կազմակերպություններում հաշմանդամներին աշխատանքի ընդունելու համար քվոտաների և հաշմանդամների համար՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների իրականացմամբ.</p> <p>3) հաշմանդամներին առավել համապատասխանող մասնագիտություններով աշխատանքային տեղերի վերապահմամբ.</p> <p>4) հաշմանդամների համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման խրախուսմամբ.</p> <p>5) հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուին հաշմանդամին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցմամբ:</p> <p>2. Օրենքի 21-րդ հոդված՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը:</p>	<p>տության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտներ, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը>>:</p>					
---	---	--	--	--	--	--

Հավելված 3. Պարտադիր լիազորությունների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է վիճակում	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
1. Համայնքի ավագանու կողմից ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան ընդունված իր կանոնակարգի առկայություն:			V << Համայնքի ավագանին ընդունում է իր կանոնակարգը ՏԻՄ օրենքի պահանջներին համապատասխան >>:	Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի իր կանոնակարգը	Առաջարկվել է հաստատել ավագանու կանոնակարգը	1 ամիս
2. Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ որոշման առկայություն:			V << Համայնքի ավագանին որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ >>:	Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ	1 ամիս
3. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:			V << Համայնքի ավագանին որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով >>:	Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է որոշում ընդունի համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ	Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ	Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը

<p>4. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>		<p>V << Համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը >>:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>Չի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ որոշում ընդունի</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p>	<p>Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը</p>
<p>5. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>Չի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին պետք է ընդունի համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշում</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>6. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ որոշման առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>Չեն պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝ համաձայն որի ավագանին ընդունում է որոշում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգի հաստատման վերաբերյալ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>7. Համայնքի ղեկավարի անհատական ակտերի ընդունումից հետո օրենքով սահմանված երկօրյա ժամկետում</p>		<p>Համայնքի ղեկավարի անհատական ակտերը ընդունումից հետո օրենքով սահմանված</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>Չի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>

<p>ուղարկելու ավագանուն անդամներին ուղարկված լինելու, ինչպես նաև համայնքի ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի վայրում համայնքի ղեկավարի անհատական ակտերի փակցված լինելու առկայություն:</p>		<p>երկօրյա ժամկետում պետք է ուղարկվի ավագանու անդամներին ուղարկված լինելու, ինչպես նաև համայնքի ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի վայրում համայնքի ղեկավարի անհատական ակտերը պետք է փակցված լինեն</p>	<p>մասին>> << օրենքի 32-րդ հոդվածի 1-1 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարի անհատական ակտերը ընդունումից հետո օրենքով սահմանված երկօրյա ժամկետում պետք է ուղարկվի ավագանու անդամներին, ուղարկված լինելու, ինչպես նաև համայնքի ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի վայրում համայնքի ղեկավարի անհատական ակտերը պետք է փակցված լինեն</p>		
<p>8. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ղեկավարը հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը որոշում է ընդունում աշխատակազմի գործավարության կարգի վերաբերյալ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>9. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված առաջարկության առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 9-րդ հոդվածի 10 կետի, 10.1-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 33 կետի, 32-րդ հոդվածի 10.1 կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգի հաստատման վերաբերյալ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>10. Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2ին պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի պահանջները՝</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>

<p>առաջարկության առկայություն:</p>		<p>կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:</p>	<p>համաձայն որի համայնքի ավագանին առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ</p>		
<p>11. Համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների օրենքով սահմանված կարգով վարում:</p>		<p>V <<Համայնքի ղեկավարը սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրները:</p>	<p>Դրույթի պահանջը պահպանված չէ, <u>2ի պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարը սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրները</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ նշյալ դրույթի պահպանման ուղղությամբ</p>	<p>Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը</p>
<p>12. Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) ստեղծված համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի առկայություն:</p>		<p>V <<Համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը >>:</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2են պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի, 32-րդ հոդվածի 10.2 կետի, 54.1-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին հաստատում է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները ու ձևավորման կարգը</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>
<p>13. Օրենքով սահմանված կարգով համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց խումբեր և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ</p>		<p>V <<Համայնքի ղեկավարը մինչև քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>2են պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 54.1 հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ համաձայն</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>Մինչև 01.01. 2015թ</p>

<p>աշխատանքների առկայություն:</p>		<p>համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լուծումներ և (կամ) քննարկումներ >>:</p>	<p>որի Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լուծումներ և (կամ) քննարկումներ</p>		
<p>14. Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար օրենքով սահմանված կարգով վճարների սահմանման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն:</p>		<p>V << Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար օրենքով սահմանված կարգով սահմանում է վճարներ: Վճարների չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ>></p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>շեն պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 60-րդ հոդվածի պահանջները՝ համաձայն որի համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար օրենքով սահմանված կարգով պետք է հաստատված լինեն վճարներ</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>Մինչև 01.01. 2015թ</p>
<p>15. Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ ավագանու հաստատմանը ներկայացված որոշման առկայություն:</p>		<p>V << Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ ավագանին կայացնում է որոշում >></p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>շեն պահպանվել</u> <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ավագանին սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>Մինչև 01.01. 2015թ</p>
<p>16. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և << կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի</p>		<p>V 2014 թվականի ընթացքում գնումների պլան չի կազմվել,</p>	<p>Չի պահպանվել Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>Մինչև 01.01. 2015թ</p>

<p><<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջների պահպանում:</p>		<p>gnumner.am կայքում չի տեղակայվել</p>	<p>օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման>> մասին թիվ 168 որոշման պահանջները՝ համաձայն որի պետք է կազմվեր գնումների պլան և տեղակայվեր gnumner.am կայքում</p>		
--	--	---	--	--	--